Հայտարարություն

Սոցիալական Պաշտպանության Վարչարարության Երկրորդ Ծրագիր

No: 5398-AM

ՀՀ ֆինանսների նախարարության «Արտասահմանյան ֆինանսական ծրագրերի կառավարման կենտրոն» պետական հիմնարկը հայտնում է, որ Համաշխարհային բանկի «**Սոցիալական Պաշտպանության Վարչարարության երկրորդ ծրագիր»** վարկային ծրագրի շրջանակում **«Ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգում սուպերվիզորների աշխատանքների բարելավման մեթոդաբանական աջակցության ծառայությունների»** առաջադրանքը իրականացնելու նպատակով հայտարարվում է խորհրդատվական ընկերության ընտրության մրցույթ:

Այս առաջադրանքի նպատակն է նպաստել ԻՄԾՀ-ի արդյունավետ կայացմանը, վերջինիս տարբեր մակարդակների կառույցներում սուպերվիզիայի՝ որպես սոցիալական աշխատանքի կառավարման կարևորագույն տարրերից մեկի ձևավորմանն ու սոցիալական աշխատանքի արդյունավետության բարձրացմանը՝ մեթոդական աջակցություն ցուցաբերելու միջոցով:

Ընտրված խորհրդատվական ընկերությունը պետք է իրականացնի հետեւյալ առաջադրանքները՝

ԱՍՀՆ պետական կարգավորման ոլորտում (այսուհետ՝ ԱՍՀՆ համակարգ) իրականացնի սուպերվիզորական աշխատանքների կատարման ներկա վիճակի վերլուծություն՝ բացահայտելու համար.

1.1. ԱՍՀՆ համակարգի տարբեր մակարդակների (այդ թվում՝ քաղաքականության մշակման, համակարգման և անմիջականորեն սոցիալական ծառայությունների տրամադրման իրավասություններ ունեցող) մարմիններում և կազմակերպություններում սուպերվիզորական աջակցություն ենթադրող խնդիրները, դրանց համար անհրաժեշտ սուպերվիզորական աշխատանքների շրջանակը, առանձնահատկությունները, այդպիսի աշխատանքների կատարման փաստացի վիճակը,

1.2. անմիջականորեն սոցիալական ծառայություններ (ՍԾ -ներ) տրամադրող մարմիններում և կազմակերպություններում սուպերվիզորական աշխատանքների կատարման համար պատասխանատու աշխատողների կատեգորիաները:

2. Մշակի մեթոդական ուղեցույց, որը պետք է պարունակի սուպերվիզիայի՝ որպես սոցիալական աշխատանքի, այդ թվում նաև վերջինիս կառավարման համակարգի կարևորագույն տարրերից մեկի էությունը, առանձնահատկությունները, սկզբունքները, գործառույթները, ինչպես նաև իրականացման մեթոդները, ըստ՝

2.1. սոցիալական պաշտպանության ոլորտում գործող ՍԾ-ներ տրամադրող մարմինների (զբաղվածության տարածքային կենտրոններ, սոցիալական աջակցության տարածքային գործակալություններ (բաժիններ), սոցիալական ապահովության տարածքային բաժիններ, բժշկասոցիալական փորձաքննական հանձնաժողովներ, ՍԾ-ներ տրամադրող ՊՈԱԿ-ներ և այլն),

2.2. ՍԾ-ների տրամադրման գործընթացները համակարգող մարմինների (ի դեմս՝ ԱՍՀՆ աշխատակազմի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների և մարզպետարանների ու ՏԻՄ աշխատակազմերի սոցիալական պաշտպանության ոլորտի համար պատասխանատու ստորաբաժանումների):

3. Մշակի ՀՄԾՏԿ-ում սուպերվիզորական գործառույթների կարգավորմանն ուղղված իրավական ակտերի (այդ թվում՝ ՀՄԾՏԿ-ում տեղակայված տարածքային մարմինների կանոնադրությունների, ինչպես նաև սուպերվիզորական գործառույթներ իրականացնող աշխատողների պաշտոնների անձնագրերի) նախագծեր կամ ներկայացնի գործող իրավական ակտերի փոփոխություններին ուղղված առաջարկներ:
4. Իրականացնի սեմինարներ՝ իր մշակած մեթոդական ցուցումները և իրավական փոփոխությունների վերաբերյալ առաջարկները ԱՍՀՆ աշխատակազմի՝ սուպերվիզիայի համակարգի ներդրման համար պատասխանատու աշխատողներին ներկայացնելու նպատակով:

Խորհրդատվական կազմակերպությունը պետք է ունենա՝

- սոցիալական աշխատանքի ոլորտում հետազոտական աշխատանքների ու մեթոդական մշակումների փորձ,
- սոցիալական աշխատանքի ոլորտում խորհրդատվական ծառայությունների մատուցման առնվազն 5 տարվա փորձ,սոցիալական աշխատանքի ոլորտի մասնագետների պատրաստման և վերապատրաստման փորձ,
- Օրենսդրական փաստաթղթեր նախագծելու փորձ,
- սոցիալական աշխատանքի, մասնավորապես, սուպերվիզորական աշխատանքի վերաբերյալ տեսական խորը գիտելիքներ և գործնական հմտություններ ունեցող բարձր որակավորում ունեցող մասնագետներ,
- ՀՀ բնակչության սոցիալական պաշտպանության ոլորտում ինստիտուցիոնալ բարեփոխումների ծրագրերի իրականացման փորձ ունեցող մասնագետներ:

Վերը շարադրված պահանջներին համապատասխանող խորհրդատվական ընկերությունները կարող են մինչեւ **սույն թվականի սեպտեմբերի 11-ը** ներկայացնել հետաքրքրվածության հայտեր անհրաժեշտ տեղեկություններով (ընկերության վերաբերյալ համառոտ տեղեկատվություն՝ ընդհանուր աշխատանքային փորձի, այդ թվում վերջին տարիներին նմանատիպ հանձնարարականների իրականացման փորձի, վերընշված պահանջներին բավարարող անձնակազմի առկայության վերաբերյալ, աշխատակազմի կենսագրական թերթիկները եւ այլն) ստորեւ նշված հասցեով:

Հետաքրքրվածության հայտերը կարող են ներկայացվել նաեւ էլեկտրոնային փոստով:

ՀՀ Ֆինանսների նախարարության
«Արտասահմանյան ֆինանսական ծրագրերի կառավարման կենտրոն պետական հիմնարկի
գործադիր տնօրեն՝ Է. Ավետյանին
Երեւան 0010, Տիգրան Մեծի փողոց 4
Հեռախոս. (374 11) 910581
Էլ. փոստ. info@ffpmc.am